

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 7

ՀՀ մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

01.06. 2020թ.

ք.Վանաձոր

Մասնակցում էին

Գ.Մարկոսյան -մարզպետի տեղակալ
Վ.Խաչատրյան -գլխավոր քարտուղարի տեղակալ
Հ.Պապոյանը, Լ.Վարդանյանը, Ռ.Հարությունյանը, Ա.Ջանազյանը, Ժ.Ղազարյանը, Է.Հախվերդյանը, Ա.Շահվերդյանը, Ա.Սահակյանը, Հ.Գասպարյանը, Ս.Ղուբաթյանը, Ա.Աղլոյանը, Ս.Գրիգորյանը, Ա.Գասպարյանը - ստորաբաժանումների ղեկավարներ
Լ.Ասլանյանը -մարզպետի խորհրդական
Հ.Այվազյանը -մարզպետի խորհրդական
Ն.Հովհաննիսյանը -մարզպետի օգնական

Օրակարգում`

1. Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների մասին.
(Փոխմարզպետ` Գայանե Մարկոսյան)
2. Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների մասին.
(Մարզպետարանի գլխավոր քարտուղարի տեղակալ` Վալերի Խաչատրյան)
3. Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների մասին.
(Լոռու մարզպետարանի ստորաբաժանումների ղեկավարներ)
4. Այլ հարցեր:

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց

1. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ Գ.Մարկոսյանին`

Տրամադրել մարզի համայնքների սերմացու ստացած շահառուների անհատական ցանկերը:

2. ՀՀ Լոռու մարզպետարանի ստորաբաժանումների ղեկավարներին`

Ուսումնասիրել կայքէջի համապատասխան բաժինները և փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվություն տրամադրել մարզպետարանի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնին:

3. ՀՀ Լոռու մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ Ա.Ջանազյանին`

Գրություն ուղարկել Վանաձորի քաղաքապետին` առաջարկելով վերանայել համայնքի ասֆալտապատման համար կնքված պայմանագրի լուծման հարցը:

4. ՀՀ Լոռու մարզպետարանի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ Հ.Գասպարյանին`

1-ամսյա ժամկետում անհրաժեշտ միջոցառումներ ձեռնարկել մարզպետարանի կայքէջում առկա թերությունների և բացթողումների վերացման ուղղությամբ:

5. ՀՀ Լոռու մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Ռ.Հարությունյանին`

ա/ Լոռու մարզի դպրոցների վերանորոգման հարցերով դիմել ՀՀ ԿԳՄՍ նախարարին` համապատասխան գրությամբ և առաջարկություններով.

բ/ Ներկայացնել տեղեկատվություն և առաջարկություններ Վանաձորի թիվ 7 դպրոցի շենքի սեփականության վերաբերյալ:

6. ՀՀ Լոռու մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի պաշտոնակատար Լ.Վարդանյանին՝

ա/ 1-օրյա ժամկետում մարզի 8 առողջապահական ընկերությունների տնօրեններից պահանջել ներկայացնելու բացատրություններ « Զոնաների » ներդրման աշխատանքների ուշացումների վերաբերյալ.

բ/ 1-ամսյա ժամկետում ներկայացնել առաջարկություններ բուժհաստատությունների բժշկական պարագաների պահանջարկի վերաբերյալ:

7. ՀՀ Լոռու մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ Է.Հախվերդյանին՝

ա/ Զանգվածային լրատվամիջոցներով համապատասխան տեղեկատվություն տրամադրել ազգաբնակչությանը Վանաձոր քաղաքի Բուլղարական տնակային ավանի հողօգտագործման և գրանցումների վերաբերյալ:

բ/ 3-օրյա ժամկետում ներկայացնել Լեռնապատի հողերի և ընդերքօգտագործման հարցերի համատեղ քննարկման վերաբերյալ առաջարկություններ:

8. ՀՀ Լոռու մարզպետարանի անձնակազմի կառավարման բաժնի պետ Ա.Աղլոյանին՝

2-օրյա ժամկետում ներկայացնել տեղեկատվություն հայտարարված մրցույթների թեստավորման և հարցազրույցի անցկացման օրերի վերաբերյալ:

9. ՀՀ Լոռու մարզպետարանի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Ա.Գասպարյանին՝

Լոռու մարզպետարանի պաշտոնական էջերում տեղադրել արդեն իսկ հաստատված սուբվենցիոն ծրագրերի վերաբերյալ տեղեկատվությունը:

9. ՀՀ Լոռու մարզպետարանի իրավաբանական բաժնի պետ Ա.Սահակյանին՝

5-օրյա ժամկետում ներկայացնել տեղեկատվություն մարզպետարանի կողմից իրավապահ մարմիններին տրամադրված նյութերի ընթացքի վերաբերյալ:

 Invalid signature



ԱՆԴԻԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ